

EDN: BQDXVS

Աֆորիզմները կենսափորձից են ծնվում.
երջանիկ մարդը փիլիսոփայելուց շատ հեռու է...

Երկիրդ կրկին պեկոծվում է: Մեկ քայլերթ են անում և ուղիղ եթերի իրավունք նվաճում, մեկ էլ՝ մեծ համերգ են կազմակերպում և շքեղագույն հրավառություն: Իսկապես մտորելու շատ բան կա. բայց չէ որ երկու դեպքում էլ հայն է դա անում, որ երկու միջացառումներին էլ շատ նույն մարդիկ են մասնակցում: Ու որքան էլ մեզ հուսադրենք ու ասենք, թե հայն արարող զենք ունի և դա այբուբենն է, որն ապահովել է մեր գոյությունը և կապահովի նաև մեր անմահությունը, դրանից լարվածությունն ու առկա վտանգները չեն անհետանում:

Մեծ սիրուց գեղեցիկ ու խելացի երեխաներ են ծնվում: Դատելով փողոցում գտնվող մարդկանց դեմքերից, թվում է թե մեր բնակչությունը վաղուց մեծ սեր չի ունեցել: Հասել ենք մի հանգրվանի, երբ հոգին չի գնահատվում, այլ գնահատվում է միայն գրպանը: Դրա համար էլ մարդիկ անհոգի և անսիրտ են դարձել: Սակայն փողի աղքատությունը ժամանակավոր երևույթ է, իսկ ուղեղի աղքատությունը՝ հավերժական ողբերգություն: Եվ այնքան էլ վտանգավոր չէ անգրագետ մարդը, վտանգավոր է իրեն գրագետի տեղ դրած անգրագետը: Մի բան, որով այնքան առատ է մերօրյա իրականությունը: Մեկ-երկու գրքույկ, սոցցանցերի մի քանի դատարկաբանություն են կարդում ու սկսում են հասարակությանը դասեր տալ: Չհասկանալով, որ խելոք լինելու համար բավարար է կարդալ տասը գիրք, բայց որպեսզի գտնել այդ տասը, պետք է կարդալ հազարը:

Հիմա էլ ժողովրդավարությունը դարձրել ենք դրոշակ, ամեն ինչում ու ամեն տեղ ցանկանում ենք տեսնել, տեղադրել այն: Սակայն մոռանում ենք, որ մեր օրերում այդ ժողովրդավարությունը շատ է աղճատվել, յուրաքանչյուրն իր ձևով ու իրեն ձեռնտու դիրքերից է այն հասկանում: Որ այդ նույն ժողովրդավարության դրոշակով մի դեպքում կոչվում են Ռուսաստանի նվաճողական նկրտումների, իսկ մյուս դեպքում Իսրայելի ձեռքով անկախություն ու ազատ ապրելու իր իրավունքի համար կռվող Պաղեստինի դեմ: Խոսելով երկու տնտեսաձևերի տարբերությունների մասին՝ Ֆիդել Կաստրոն խելացի համեմատություններ էր անում. կապիտալիզմի օրոք միայն անվանափոխումներ կատարեցին. թագավորները կոչվեցին նախագահներ, իշխանները՝ բաժնետիրական ընկերությունների նախագահ-սեփականատերեր: Անարդարություններն այնքան զարգացան, որ միջազգային իրավական համակարգը դարձավ չորս-հինգ աստիճանի և պաշտպանում է միայն ուժեղների շահերը, ահա քեզ նաև ժողովրդավար-արևմտյան արժեհամակարգը: Այնպես որ, ուրիշներին հաճոյանալու համար չարժե փոխել ազգային դիմագիծ ու էություն: Քանզի գրեթե միշտ էլ նոր կոշիկները սեղմում են ոտքերը, բայց երբեք ոտքերդ չես փոխում:

Ճշմարիտ խոսելը պատիվ է, իսկ ստախոսությունը՝ ստորություն: Ցավ է, երբ օտար ազգերը չեն ճանաչում մեզ: Ավելի մեծ ցավ է, երբ օրվա հայությունն ինքը չի ճանաչում իրեն: Գարեգին Նժդեհն ասում էր, թե ինչո՞ւ է կյանքը հաճախ այնպիսի չար խաղեր խաղում, որ մտածելիս մարդու սրտի մեջ արյունն է պաղում: Իսկ ամենավտանգավորն այն է, երբ չարիքը չի՝ պատժվում, նա սկսում է հավակնել՝ պարզևատրման: Երբ անարդարը խոսում է արդարությունից, փնթին՝ մաքրությունից, անդաստիարակը՝ դաստիարակությունից, անկիրթը՝ կրթությունից, հիմարը՝ խելքից: Մարդիկ խառնել են իրենց դերերը: Հավանաբար իրավացի էր ռուս մեծ գրող, հոգեվերլուծաբան Դոստոևսկին, երբ ասում էր, որ սատանայից երեք փետուր պոկվեց, մեկը գնաց սոսնձվեց փողին, մյուսը՝ իշխանության աթոռին, մյուսն էլ՝ տգետին: Այդ օրվանից մինչ հիմա սատանան էլ ոչինչ չի անում, քանզի անելիք չունի: Վերջին տարիների Հայոց պատմությունը վկա: Հայտնի ճշմարտություն է, որ մուկը փոքր է, բայց մկան չափ թայանող ու լափող կենդանի չկա: Սակայն նա ի վերջո թակարդն է ընկնում: Ցավոք, մեր օրերում մուկ-մարդիկ շատացել են, թակարդները կարծես՝ պակասել են կամ անորակ դարձել:

Հուսահատվել պետք չէ սակայն, որովհետև աղամանդը ցեխի մեջ էլ աղամանդ կմնա, իսկ ապակին փայլի մեջ էլ՝ անզին գոհար չի դառնա: Այդպես էլ մարդն է այս կյանքում, որը չունի խոհեմություն և որքան էլ փորձի կուտակել՝ չի դառնա մեծություն: Մեծությունը լոկ այն մարդն է, որը հարուստ է հոգով, ով կրթել է հենց ինքն իրեն ու ապրել միշտ հարգանքով: Գրպանի մեծությամբ հաստատ գաղափարներ չեն ծնվում, գիտությունը չի զարգանա: Կարևորն ու դժվարը փորձել

կանում գոնե մի քիչ մարդ դառնալ ու մարդ մնալ: Թե չէ կան մարդիկ, ովքեր տանել չեն կարողանում երջանիկ մարդկանց: Աստված նրանց համբերություն տա, իսկ մեզ ավելի շատ երջանկություն: Մեծ դերասան Ալ Պաչինոն այդ առիթով շատ պատկերավոր ասել է, որ կյանքը նման է մեծ սուպերմարկետի, վերցրու ինչ ու որքան ուզում ես, բայց մի մոռացիր, որ առջևում դրամարկոն է և ամեն ինչի համար պետք է վճարես: Իսկ մենք հասել ենք մի հանգրվանի, որ եթե հիմա ասեն, հրապարակում ձրի համերգ կա ու ձրի ուտելիք, ապա մեկ ժամ հետո, այնտեղ նույնիսկ կանգնելու տեղ չի լինի: Քանի որ մնացածը՝ այս կյանքում «որտեղ հաց, այնտեղ կաց»-երի համար երկրորդական է:

Անկախության տարիներին հաճախ են հնչել «թեժ գարունների կամ աշունների» մասին կանխատեսումներ: Քաղաքագիտության մեջ, և, առհասարակ քաղաքական ու քաղաքացիական տարբեր գործընթացների շրջանակներում «քաղաքական թեժ աշուն» տերմինը կամ նման սպասումների ազդարարումը ոգևորության և թերահավատության համադրության երկակի զգացումներ է առաջացնում: Իսկ մեր օրերում թերհավատ դարձած ժողովրդի մոտ միայն՝ հեզնախառը ժպիտ: Քանի որ տարիների փորձից ելնելով հասարակ մահկանացուներն այնքան հաճախ ու այնքան շատ խաբվեցին, որ ցանկացած նորության ու փոփոխության վերաբերում են վախով: Իսկ վախը դեռ չի օգնել զրելու ոչ մի սիմֆոնիա կամ պոեմ, կնքելու խաղաղության պայմանագիր, բուժելու հիվանդություններ: Վախը դեռ թշվառությունից չի փրկել ոչ մի ընտանիք, ոչ մի երկիր չի ազատել ֆանատիզմի էքստազից: Վախը չի փրկում ոչ փյուզվող ամուսնությունը, ոչ ձախողված բիզնեսը: Դրան ընդունակ է արիությունը: Դրան ընդունակ է հավատը: Դրան ընդունակ են մարդիկ, որոնք հրաժարվում են ղեկավարվել կամ քողարկվել իրենց վեհերոտությամբ: Բայց վախը: Նա մեզ հրում է գնդանի մեջ ու շոինդով փակում է դուռը: Սակայն ըստ Մաքս Լուկադոյի, կա վախ, որը կապված է մտածողության հետ, վերջինիս դրդելով զգոն լինել, վերահսկելու բոլոր այն անելիքները, որոնք զերծ կպահեն անկշռադատ արկածախնդրությունից ու ինքնավտանգումից: Այդ վախը իմաստուն է բոլոր պահերոշ ձեռնարկումներից:

Կարևորը միշտ գիտակցելն է, որ երբ բժշկի միտքը հիվանդ է, այլոց բուժումը անհնար է: Կարծես հենց մեր իրականության համար է Օտտո Ֆոն Բիսմարկն ասել. վատ օրենքներով և լավ պաշտոնյաներով լիովին հնարավոր է երկիրը կառավարել, բայց եթե պաշտոնյաները վատն են, ամենալավ օրենքներն էլ չեն օգնի: Իսկ մեր նման երկրի համար պիտի հստակ լինի, որ պատերազմում հաջողության հասնելը որոշում են երկու գործոն. նոր նմուշի զենքն ու դպրոցական ուսուցիչը: Կարծում եմ վերջինից էլ պետք սկսենք, այնինչ ուսուցիչը ամենաանտեսված, ամենացածր վճարվող, ինչ որ տեղ նաև արհամարված է մեզանում: Էլ չխոսենք դասագրքերի աղճատման կամ ընդհանրապես բացակայության մասին: Իսկապես, ուսուցիչը է սկսվում հայրենիքը. ինչպիսին եղավ նա, այնպիսին էլ կմեծանա սերունդը: Պարույր Սևակն ավանդում էր, երբ քայլերդ քեզ կտանեն այս աշխարհի բարձունքներին, չմոռանաս, ծունկդ ծայես ու խոնարհվես հայրենիքիդ, հիշես ուսուցիչդ:

Դատող և իրատես պետք է լինել: Ինչպես հայկական հողերի, այնպես էլ Ասիա, Եվրոպա և Աֆրիկա մայցամաքների խաչմերուկի՝ «ճամփաբաժան» լինելու հարցին շատ լուրջ վերաբերվել: Հիշել, որ Ռուսաստանը Հարավային Կովկաս մուտք է գործել և պատերազմի մեջ է մտել Օսմանյան կայսրության և Պարսկական խանությունների հետ, վրացիների ու նաև մեր խնդրանքով: Հաղթել պարսիկներին և 1813 թ. Թուրքմենչայի պայմանագրով վերջ է դրել 387 թ. հռոմեացիների և պարսիկների միջև Հայաստանի բաժանման պայմանագրին և գրավյալ տարածքը՝ 1828-ից մտցվել է 14-րդ՝ Ռուսական կայսրության կազմի մեջ: Առաջին Համաշխարհային պատերազմի հետևանքով Ռուսական և Օսմանյան կայսրությունները վերանում են: Աշխարհը վերաբաժանվում է որոշ նախկին կայսրությունների և Եվրոպական «լուսավոր» մանդատներով տերությունների միջև: Որպես կանոն չկան լավ կայսրություններ: Դրանց մեջ վատերից լավը՝ հայ ժողովրդի համար, Յարական Ռուսաստանն էր, որի գրավյա տարածքում գոյատևում էին Անկախ Հայաստանի և երեսուն տարուց ավելի՝ Արցախի Հանրապետությունները: Իսկ դրանց տերը հայ ժողովուրդն է և ոչ թե Բաղենմադենը, Մակրոն-բարոնն ու, թեկուզ, Պուտին-մուտինը: 1918 թ. 6-7 հարյուր հազար բնակչությամբ Հայաստանը ոչ միայն մասնակիցը եղավ ԽՍՀՄ աշխահակալ կայսրության հիմնադրմանը, այլև ստեղծեց 3,7-միլիոնանոց զարգացած ու բարգավաճ Հայաստան: Ու թեև շատ սխալներ և թերություններ կային, սակայն արտաքին վտանգներից զերծ էինք: Իսկ այսօր պետք է ուղիղ նայենք իրականության աչքերին, հստակ գնահատենք իրավիճակն ու ճիշտ հաշվարկենք ուժերի հարաբերակցությունը, որպեսզի խուսափենք տհաճ անակնկալներից:

Արդ, ի՞նչ հիմնական առավելություններ ունի թշնամական Ադրբեջանը՝

1. Նավթի և գազի պաշարներ,
2. Կոմունիկացիոն նախագծերի առումով բարենպաստ դիրք,
3. Ներդրումների համար Հայաստանից երեք անգամ մեծ շուկա:

Իսկ մեր ունեցած կարևոր առավելությունը հայ **ՄԱՐԳԵ** է ու նրա ինտելեկտը: Նավթն ու գազը անսպառ չեն: Գիտատեխնիկական արագ առաջընթացն արդեն կոմունիկացիաների ու շուկաների նախկին սահմանումներին մեծ վերապահումով է վերաբերում, իսկ այդ գիտատեխնիկական աշխատեցնողն ու կատարելագործողը մարդն է ու նրա ինտելեկտը: Տեղին է ասել՝ բառերն ավելորդ են: Ցավն այն է, որ մեր ամենագետները սաղարթն ուսումնասիրում են, բայց դեռ բնին չեն հասել, ուր մնաց Արմատը տեսնեն: Իսկ ավելի մեծ ցավը նրանում է, որ այդ պարզ ճշմարտությունը չհասկանալով և ոչ մի կարծիք հաշվի չառնելով՝ առաջ են գնում հայտնի չի, թե՛ դեպի ուր: Բայց չէ որ հարկավոր է վճռական հարցերում գոնե խելացի, հաշվենկատ ու ազնիվ լինել: Բայց ինչ ասես՝ ոչ ոք և երբեք ազնվությունը չի կորցնում, բացի նրանից, ով այն չի ունեցել...

Сдана / Հանձնվել է՝ 10.02.2025

Рецензирована / Գրախոսվել է՝ 14.02.2025

Принята / Ընդունվել է՝ 19.02.2025